ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ
20 դեկտեմբերի 2022 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9/2Ա
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 9-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 39 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Տիգրան Ավինյանը, Ստեփան Մաչյանը, Գևորգ Սիմոնյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Արամ Դանիելյանը, Սուսաննա Գրիգորյանը, Կորյուն Մկրտչյանը, Սաշա Կատվալյանը, աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը, առողջապահության վարչության պետի պաշտոնակատար Յակով Ասատրյանը, մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանը, լրատվության վարչության պետի պաշտոնակատար Լևոն Սարդարյանը:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լևոն Հովհաննիսյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 20-ի արտահերթ նիստի օրակարգը և ընթացակարգը.

1) Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 22-ի հ.672-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

2) Հուշատախտակների տեղադրման մասին:

3) Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

4) Գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնելու մասին:

5) «Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

6) Երևան քաղաքում Ալեքսեյ Հեքիմյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

7) Երևան քաղաքում Կարպ Խաչվանքյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

8) Երևան քաղաքում Գևորգ Վարդանյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

9) Երևան քաղաքում փողոցներ անվանակոչելու մասին:

10) Երևան քաղաքում Սլավիկ Չիլոյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

11) Երևան քաղաքում Օհան Դուրյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

12) Երևան քաղաքում Բուժաշխատողների փողոց անվանակոչելու մասին:

Լ. Հովհաննիսյանն առաջարկեց օրակարգի 1-ին՝ «Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 22-ի հ.672-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին», 2-րդ՝ «Հուշատախտակների տեղադրման մասին» և 4-րդ՝ «Գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնելու մասին» ավագանու որոշումների նախագծերը քննարկել որպես չզեկուցվող.

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 37 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – Կողմ 35, դեմ 0, ձեռնպահ 2

Առաջարկն ընդունվեց:

Երևանի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 20-ի արտահերթ նիստի օրակարգում ընդգրկված հարցերը կքննարկվեն հետևյալ հաջորդականությամբ.

1.Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 22-ի հ.672-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: **Չզեկուցվող**

2.Հուշատախտակների տեղադրման մասին: **Չզեկուցվող**

3.Գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնելու մասին: **Չզեկուցվող**

4.Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: **Զեկուցվող**

5.«Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: **Զեկուցվող**

6.Երևան քաղաքում Ալեքսեյ Հեքիմյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: **Զեկուցվող**

7.Երևան քաղաքում Կարպ Խաչվանքյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: **Զեկուցվող**

8.Երևան քաղաքում Գևորգ Վարդանյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: **Զեկուցվող**

9.Երևան քաղաքում փողոցներ անվանակոչելու մասին: **Զեկուցվող**

10.Երևան քաղաքում Սլավիկ Չիլոյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: **Զեկուցվող**

11.Երևան քաղաքում Օհան Դուրյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: **Զեկուցվող**

12.Երևան քաղաքում Բուժաշխատողների փողոց անվանակոչելու մասին: **Զեկուցվող**

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լևոն Հովհաննիսյանը հայտնեց, որ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 18.06.2009թ. N1-Ն որոշման 114-րդ կետի 5-րդ ենթակետը և 117.1 կետը՝ առաջնահերթ քվեարկության են դրվում օրակարգում ընդգրկված չզեկուցվող՝ «Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 22-ի հ.672-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին», 2-րդ՝ «Հուշատախտակների տեղադրման մասին» և 4-րդ՝ «Գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնելու մասին» հարցերը:

Համաձայն 114-րդ կետի 5.1 ենթակետի՝ օրակարգում ընդգրկված չզեկուցվող հարցերը քվեարկվում են մեկ քվեարկությամբ, ընդ որում՝ ավագանու անդամի կողմ, դեմ կամ ձեռնպահ քվեարկությունը համարվում է համապատասխանաբար կողմ, դեմ կամ ձեռնպահ քվեարկված յուրաքանչյուր նախագծին:

Հարց – 1.Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 22-ի հ.672-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևանի քաղաքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 22-ի «Նոր Արեշ» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը միացման ձևով վերակազմակերպելու, «Մաքս Մեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներդրումներ կատարելու առաջարկին հավանություն տալու և Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի փետրվարի 11-ի N112-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հ.651-Ա որոշման 5-րդ կետում «17 տարի» բառերը փոխարինել «16 տարի» բառերով:

Հարց- 2.Հուշատախտակների տեղադրման մասին:

ՈՐՈՇՎԵՑ – Տալ համաձայնություն.

1) Հայ ֆիզիկոս, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի արտասահմանյան անդամ Միշիկ Ղազարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Սարյան փողոցի հ.31 շենքի պատին փակցնելու վերաբերյալ,

2) Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յուրի Դավթյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Գարեգին Նժդեհի փողոցի հ.1 շենքի պատին փակցնելու վերաբերյալ:

Հարց- 3.Գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - Երևան համայնքի սեփականություն համարվող գույքը (գրքերի հավաքածու), ընդհանուր՝ 18663546.29 (տասնութ միլիոն վեց հարյուր վաթսուներեք հազար հինգ հարյուր քառասունվեց դրամ, 29 լումա) հաշվեկշռային արժեքով, սեփականության իրավունքով անհատույց հանձնել (նվիրել) Երևանի ենթակայության գրադարաններին՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 38 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – Կողմ 35, դեմ 0, ձեռնպահ 3

Որոշումներն ընդունվել են ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լ. Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ այժմ քննարկման է ներկայացվում 2022 թվականի դեկտեմբերի 20-ի արտահերթ նիստի զեկուցվող հարցերը.

4. ԼՍԵՑԻՆ Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**:**

ԶԵԿՈՒՑԵՑ-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով-Երևան քաղաքի ավագանու անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով-Երևան քաղաքի ավագանու անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի մասին» N 497-Ն որոշման NN 1, 2, 3, 4, 5, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1-7 հավելվածների:

2. Որոշման 2-րդ մասի «6,443,531.2» թիվը փոխարինել «4,843,531.2» թվով:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 38 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 36, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

5. ԼՍԵՑԻՆ - Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին**:**

ԶԵԿՈՒՑԵՑ-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Լևոն Զաքարյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ-Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել «Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 38 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 38, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

6. ԼՍԵՑԻՆ-Երևան քաղաքում Ալեքսեյ Հեքիմյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին**:**

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում Ալեքսեյ Հեքիմյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ-Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Արաբկիրի թիվ 49 փողոցն անվանակոչել ԽՍՀՄ ներքին ծառայության՝ ոստիկանության գեներալ-մայոր, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր, երգահան Ալեքսեյ Հեքիմյանի անվամբ ՝ «Ալեքսեյ Հեքիմյան փողոց»:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 37 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 34, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

7. ԼՍԵՑԻՆ-Երևան քաղաքում Կարպ Խաչվանքյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին**:**

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում Կարպ Խաչվանքյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ-Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Արաբկիրի թիվ 37 փողոցն անվանակոչել հայ դերասան, ռեժիսոր, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Կարպ Խաչվանքյանի անվամբ՝ «Կարպ Խաչվանքյան փողոց»:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 36 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 35, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

8. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքում Գևորգ Վարդանյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին**:**

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում Գևորգ Վարդանյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ-Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Արաբկիրի թիվ 39 փողոցն անվանակոչել հետախույզ Գևորգ Վարդանյանի անվամբ՝ «Գևորգ Վարդանյան փողոց»:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 36 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 31, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 4

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

9. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքում փողոցներ անվանակոչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Նուարդ Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում փողոցներ անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ-Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Արաբկիրի 17-րդ փողոցն անվանակոչել հայ արձակագիր, ազատամարտիկ Լևոն Խեչոյանի անվամբ՝ «Լևոն Խեչոյան փողոց»:

2. Երևան քաղաքի Արաբկիրի 19-րդ փողոցն անվանակոչել անվանի բանաստեղծ, պետական մրցանակի դափնեկիր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Դավիթ Հովհաննեսի անվամբ՝ «Դավիթ Հովհաննեսի փողոց»:

3. Երևան քաղաքի Արաբկիրի 23-րդ փողոցն անվանակոչել հայ բանաստեղծ, թարգմանիչ, գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր Հրաչյա Թամրազյանի անվամբ՝ «Հրաչյա Թամրազյան փողոց»:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 36 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 36, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

10. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքում Սլավիկ Չիլոյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Նուարդ Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում Սլավիկ Չիլոյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ-Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Արաբկիրի 25-րդ փողոցն անվանակոչել հայ բանաստեղծ, թարգմանիչ Սլավիկ Չիլոյանի անվամբ՝ «Սլավիկ Չիլոյան փողոց»:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 35 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 33, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

11. ԼՍԵՑԻՆ-Երևան քաղաքում Օհան Դուրյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին**:**

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Զարուհի Աղաջանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում Օհան Դուրյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ-Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Մարկոս Հարությունյան-Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի 5-րդ փողոցն անվանակոչել հայ մեծանուն դիրիժոր Օհան Դուրյանի անվամբ՝ «Օհան Դուրյան փողոց»:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 36 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 36, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

12. ԼՍԵՑԻՆ- Երևան քաղաքում Բուժաշխատողների փողոց անվանակոչելու մասին**:**

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Աշոտ Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում Բուժաշխատողների փողոց անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ-Ելույթների համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Լուսինե Գևորգյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Արթուր Իսպիրյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Լևոն Զաքարյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի 17-րդ փողոցն անվանակոչել Բուժաշխատողների փողոց:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 39 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 37, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կազմեց՝
Ն. Ղուկասյան